



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի Մ Ա Ր Ջ Պ Ե Տ**

<< ----->> << ----->> 2021թ.

N -----

«Վարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար պարոն Գ. Սանոսյանին»

Հարգարժան պարոն Սանոսյան,

Ի պատասխան Ձեր՝ 2021 թվականի օգոստոսի 18-ի NԳՍ/14.1/21252-2021 գրության, հայտնվում է, որ ՀՀ Արմավիրի մարզպետարանում համապատասխան աշխատակիցների մասնակցությամբ քննարկվել է հանրային լրագրության ակումբի հարցումը և ներկայացվում է նշված հարցերի օրենսդրական կարգավորման շրջանակները, մասնավորապես՝

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջի համաձայն, ֆինանսների բնագավառում որպես սեփական լրագրություն, **համայնքի ղեկավարը** օրենքով սահմանված կարգով կազմակերպում է **տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը:**

<<Համայնքային կառարչական հիմնարկների մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հիմնարկն իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն է, որն ստեղծվում է տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լրագրությունների լիարժեք և արդյունավետ իրականացման և քաղաքացիական իրավահարաբերություններին նրանց մասնակցության ապահովման նպատակով: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հիմնարկն ունի անվանում, որը ներառում է մարզի, համայնքի անվանումը, ինչպես նաև համայնքապետարանի (Երևանի դեպքում՝ Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմ բառերը, իսկ 5-րդ մասի համաձայն՝ հիմնարկն ունի ՀՀ պետական գինանշանի պատկերով և հիմնարկի հայերեն անվանմամբ կլոր կնիք: Հիմնարկը կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

Եվ որպես հավելում, հայտնվում է, որ <<Համայնքային կառարչական հիմնարկների մասին>> ՀՀ օրենքի դրույթները, որպես պարտադիր պահանջներ, ներառված են նաև համայնքապետարանների աշխատակազմերի կանոնադրություններում, իսկ նշված կանոնադրության օրինակելի տարբերակը ՀՀ Արմավիրի մարզպետարանից մարզի համայնքներ է առաքվել դեռևս 2013 թվականի մարտ ամսին, որպես ՀՀ փոխվարչապետ, տարածքային

կառավարման նախարարի 2013 թվականի մարտի 1-ի N01/16/915-13 հանձնարարական՝ տեղայնացնելու և հաստատելու նպատակով:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ համայնքի ղեկավարը համայնքի գործադիր մարմինն է, ներկայացնում է համայնքը և իրականացնում է ՀՀ Սահմանադրությամբ, նույն օրենքով և այլ օրենքներով նախատեսված լիազորությունները: Իսկ նույն օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջի համաձայն՝ Համայնքի ավագանու որոշումը **կնքում է համայնքի ղեկավարը կամ նրա պաշտոնակատարը**, 35-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի համաձայն՝ **համայնքի ղեկավարը**, ի թիվս այլնի, որպես ընդհանուր լիազորություն՝ **կնքում է ՀՀ համայնքների կամ այլ պետությունների համայնքների հետ պայմանագրերը**, դրանք ներկայացնում է համայնքի ավագանու վավերացմանը:

Հարգանքով՝

Հ. Մաթևոսյան

 Недействительная подпись

X 

VERIFIED OCSP 20.08.2021 09:37:31 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Կար.՝ Ն. Պեդրոսյան
Լ. Հարությունյան

Հեռ.՝ 023727649